2. Չէկեղեցիս զանգակատանս Հար կարդացել է զնկեղեցիս եւ զանգակատունս: Արձանագրությունն կազմողն եկեղեցիս տակով հասկացել է զանգակատան միջի մասունքները և ոչ թե զանգակատանից անկախ ինչ որ այլ եկեղեցի:
3. Վազն իմ որդի Արատա Հար կարդացել է՝ վանիս որդի Արատն:

## 103. Զանգակատան ներսում մեջտեղի մասունքի ճակատին

*ԺԳ—ԺԴ դդ.*

Հրատարակվում է առաջին անգամ

1 *[Ա] պատարագ Ստեփաննոսի Կամրանց, Ա։*
2 *Ա պատարագ Բանուքին Դմանեցի՝*
3 *Տայա-*
4 *խաին մա-*
5 *ւրն։*
6 *...է առաջի Այ։*

Ծանոթություն.— *1. 3—6 տողերը գրված են նախորդ տողերի աջ կողմում, մյուս մասունքի մասում, հավանաբար ցույց տալու համար, որ մյուս մասունքում ևս պետք է պատարագ մատուցվի նույն Ստեփաննոսի և Բանուքի համար:*
*2. 6-րդ տողում ջնջված են անեծքի բառերը, որ հավանաբար պետք է կարդալ* խափանողն պարտական է առաջի Այ *կամ* ով չառնէ, մեղացս տէր է առաջի Այ:

## 104. Զանգակատան մեջ, երրորդ հարկի մասունքների ճակատին սեվ ներկով

*ԺԳ դար*

Հրատարակվում է առաջին անգամ

1 . . . . . . . . . . . . . . . . . . . . .
2 . . . . . . . . . . . . . . . . . . . . .
3 . . . *րձաւո Վա . . . [եղբար]ցս կամակցու . . .*
4 . . . . . *[հաս]տատեցին* . . . . . . . . . . . . .
5 . . . *[պատարագե]լ զԲս. Եւ ես խոստա-*
6 *ցա արդինաւ որ տրաւք ծառաել զսոսա. ամէն։*

Ծանոթություն.— *3-րդ տողում երևացող գրերից կարելի է ենթադրել, որ առաջին բառը և շարունակությունը* [Մե]րձաւո[ր] Վա... է *նման է 102 արձանագրության, որ նույն պատին է փորագրված. հետևապես, այս արձանագրությունը նախօրոք գրված է եղել ներկով, առանց փորագրության, բայց հետո վերաշարադրել են փորագիր արձանագրությամբ նույն տեղի մոտերքին:*